

## Հայտարարություն

2010թ. հունվարի 19-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ակնհայտ ապօրինի վճռով «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը դատապարտվեց յոթ տարվա ազատազրկման: Ողջ դատաքննության ընթացքում որևէ հիմնավորում չներկայացվեց նրա կողմից զանգվածային անկարգություններ կազմակերպելու առումով: Ավելին, Փաշինյանի նկատմամբ առաջադրված էր նույն բովանդակությամբ մեղադրական եզրակացությունը, որը նախկինում առաջադրվել էր ընդդիմության ներկայացուցիչ յոթ քաղկալանավորներին, և որի հիման վրա վեցի նկատմամբ կայացվել էր ավելի պակաս ժամկետ նախատեսող ազատազրկում, ինչի հետևանքով նրանք համաներմամբ հայտնվել են ազատության մեջ:

Նիկոլ Փաշինյանի նկատմամբ դատարանի վճիռը ոչ թե իրավական որոշում է, այլ քաղաքական հետապնդման անթաքույց ակտ: Կայացվել է արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, ինչը քրեորեն պատժելի արարք է:

Հայաստանի իշխանությունները պարտավոր են ապահովել արդար դատավարություն՝ չբարդելով 2008թ. մարտի 1-ին քաղաքացիների նկատմամբ իրականացված հանցագործությունների պատասխանատվությունը ընդդիմության վրա՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի եւ մյուս քաղբանտարկյալների:

Պահանջում ենք անհապաղ դադարեցնել Նիկոլ Փաշինյանի նկատմամբ իրականացվող քաղաքական և ակնհայտ ապօրինի քրեական հետապնդումը և ազատ արձակել նրան:

*Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն*

*Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտե  
Երիտասարդություն հանուն ժողովրդավարության  
Իրավունքի և ազատության կենտրոն*

*Փաստաբաններ մարդու իրավունքների համար*

*Հույս*

*Ջարթոնք 89*

*Քաղաքացիական ազգային նախաձեռնություն*

*Մենք+*

*Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ*

*Էկոդար*